

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ.

Ըստ գրաւոր խնդրոյ գլխաւոր կառավարչաց Լազարեան ձեմարանին կրատարակեմք հետագայ կանոնները, զորս արդէն ինքեանք առանձին տետրակով տպագրեր են հայերէն եւ ռուսերէն:

Կ Ա Ն Ո Ն Ք

Վասն ընդունելոյ Լազարեան ձեմարանի որդեգիրք, Հոգեւորական եւ Նախարարական բաժինների աշակերտք.

Կառավարութիւնն Լազարեան ձեմարանի Արեւելեան լեզուաց հարկաւոր է համարում հասուցանել ի զիտութիւն Ռուսաստանի մէջ բնակող Հայոց, որք ցանկան իւրեանց որդիք կամ ազգականքը տեղաւորել ի րիւս, Ա. Լազարեանց ձեմարանի որդեգրաց, Բ. Հոգեւորական, եւ Գ. Նախարարական բաժինների աշակերտաց, քի այսուհետեւ ուրիշ կերպով շէն կարող մանկունք ընդունուիլ ի յեւսակեալ կարգս ձեմարանի աշակերտաց, բայց միայն՝ պահպանելով հետագայ պայմանք եւ կանոնք, որք են.

Ա. Խնդիր տալոյ ժամանակին վասն ընդունելոյ ի րիւս այնպիսի աշակերտաց՝ պարտական է յարակցել վկայական բուղբք վասն ծննդեան եւ մկրտութեան, վասն պատասխանաւորի, վասն կոշտան ծնողաց, եւ վասն ջեւորութեան. իսկ հարկաւոր անձինք՝ բաց յայտման պարտական են առաջի առնել վկայական բուղբք արձակման յիւրեանց հասարակութեանց:

Բ. Ի ձեմարան մտնողաց ի սկզբան անդ ռուսական տառնոյն պահանջում են հետեւեալ տեղեկութիւնք.

Վասն մտնելոյ յառաջին դաստան. ի Կրօնական ուսմանց՝ կարեւորագոյն աղօթքներ, Հանգանակ Հաւատոյ, եւ տառաքանեալ պատկերանք Աստուծոյ: Կարդալ եւ գրել Հայերէն, Ռուսերէն եւ Գաղղիարէն: Չորս առաջին կանոնք բուրաքանութեան (четыре первые действия арифметики).

Վասն մտնելոյ յերրորդ դաստան. ի Կրօնական ուսմանց՝ Համառօտ Քրիստոնեական վարդապետութիւն: Ի Հայոց լեզուէ՝ գլխաւոր ձեւք փոփոխական մասանց բանի, ձեւք նուրբանց անուանց եւ դերանուանց, եւ խոնարհմանց կանոնաւոր բայից: Ի Ռուսաց լեզուէ՝ Բերականութեան սկզբունք: Ի Գաղղիական լեզուէ՝ Ձեւք խոնարհմանց (բայից), ի թուաբանութեան այն կանոնք՝ որ կոշտում են Именованные числа, простые и десятичные дроби. Введение в арифметику: Ընդհանուր տետրիւն (Общий обзор):

Վասն մտնելոյ յերրորդ դաստան. ի Կրօնական ուսմանց՝ Սրբազան Պատմութիւն Աւետարանի: Ի Հայոց լեզուէ՝ առաջին մասն Բերականութեան: Ի Ռուսաց լեզուէ՝ առաջին մասն Բերականութեան: Ի Գաղղիական լեզուէ՝ առաջին մասն Բերականութեան:

րեան, գլխաւոր կանոնք Համաձայնութեան, քաղմանութիւն զիւրմանց հասուածոց:— Ի Մարեմարիկայէ՝ ամբողջ բուրաքանութիւն: Համառօտ ընդհանուր Պատմութիւն:

Վասն մտնելոյ ի յորրորդ դաստան. ի Կրօնական ուսմանց՝ Առակախօսութիւնք Քրիստոսի, եւ Պատմութիւն Նահապետաց, Մարգարեից, Առաքելոց եւ այլոց երեւելի անձանց, քաղաքի ի Հին եւ ի Նոր Կտակարանաց: Ի Հայոց լեզուէ՝ Համաձայնութիւն: Ի Ռուսաց լեզուէ՝ Համաձայնութիւն: Ի Գաղղիական լեզուէ՝ մանրամասն տեղեկութիւն Համաձայնութեան, Թարգմանութիւն ի Գաղղիական լեզուէ ի Ռուս: Ի Մարեմարիկայէ՝ մանրամասն տեղեկութիւն գրութեան (Подробное знание арифметики): Յերկաշափութեան (изъ Геометрии) միւս ցայն մասն՝ որ կոշտում է Проворональные линии: Ընդհանուր պատմութիւն, եւ Ռուսաց պատմութիւն համառօտ: Աշխարհագրութիւն եւրոպայի (1)

(1) Դասական մատենագիրք.

ա. Կրօնական ուսմանց. Հաւատապատում, Մ. Մեքեանց: Քրիստոսապատում, նոյն հեղինակի: Առակախօսութիւնք Քրիստոսի ի Քրիստոսապատում տետրակէն նոյն հեղինակի: Հրանանգ Քրիստոնեական հաւատոյ, նոյն հեղինակի:

բ. Հայոց լեզուի. Բերականութիւն Հայկական լեզուի, Մ. Կմին:

գ. Ռուսաց լեզուի. Смирнова учебникъ русскаго языка, курсъ первый վասն առաջին դաստանի, курсъ второй վասն երկրորդ դաստանի, եւ վասն երրորդ դաստանի Перевальского Практическая русская грамматика, часть III.

դ. Մարեմարիկայի. վասն առաջին դաստանի Руководство къ арифметикѣ Евсее, часть I: վասն երկրորդ դաստանի того же руководства, часть II: վասն երրորդ դաստանի Перевальского Гимназический курсъ чистой Математики, часть III, Геометрия.

ե. Աշխարհագրութեան. Ободовскаго Всеобщей географіи учебная книга.

զ. Պատմութեան. վասն երկրորդ դաստանի Берте Всеобщая история въ разсказахъ для дѣтей: վասն երրորդ դաստանի Руководство къ первоначальному изучению Русской исторіи Устрялова.

է. Գաղղիական լեզուի. վասն առաջին եւ երկրորդ դաստանի Firmin, le guide de l'enfance, ou Cours pratique de la langue française à l'usage des commençants: վասն երրորդ դաստանի Noël et Chapsal, abrégé de la grammaire française.

Ծանօթ. Վերոյիւեալ տեղեկութիւնն շեն պահանջում յայն աշակերտաց, որք ցանկան մտնելու ի նախաւորական բաժինը, որոյ մէջ բնդաւնում են մտնելուն յ8 տարեկանէն մինչ յ10 տարեկան, առանց հարցանմանքեան:

Գ. Միայն այն Հայագրի մտնելուն կարող են բնդունուիլ ի վերոյիւեալ յերիս կարգս ձրիավարձ աշակերտաց ձեմարանի, որք պատրաստուած են համաձայն վերոյգրեալ ցուցակի: Վասն հաստատապէս հասնելոյ այս նպատակիս՝ Կառավարութիւնն ձեմարանի դիմում է այսու առ տեղական ուսումնարանս Հայոց, որք գտնուում են ի Տփլիս, յԵրեւան, յԵջմիածին, ի Նոր Նախիջեւան, ի Թեոդոսիա, յԱստրախան եւ յայլ քաղաքս, խնդրելով, որ բնեն համաձայն ձեմարանի ցուցակին զկոշում աշակերտացուիք (կանդիդատս) ի շարս ձրիավարձ աշակերտաց, եւ ի սան նոցա յամեն անգամին վկայական բուրքի մասին ունելոյ նոցա բոս բաւականին այն հմտութիւնք, որք պահանջուում են վասն մտնելոյ շորս դասասանց միայն մէջ: Վասն որոյ

Դ. Ծնողք այն կանդիդատսի՝ որք պիտի հաշուին ի թիւս ձրիավարձ որդեգրաց, պատրաստ են, յէս ստանալոյ գրաւոր վճարագիրք ի Կառավարութենէ ձեմարանի, յառաջ քան զուղեւորիլ զնոյն կանդիդատս ի Մոսկվա, ներկայացուցանել զնոսա ի նախամտնութիւն յիւեալ ուսումնարանաց մէջ, եւ շուղարկել ըզնոսա ի ձեմարան քանի որ շեն ստացած յուսումնարանաց այն բաւարար վկայութիւնք, զորս պատրաստ են նոքա առաջի առնել ձեմարանի Կառավարութեան յէս հասանելոյ ի Մոսկվա: Առանց այս վրկայականաց ոչ ոք չունի իրաւունք մտնելու ի թիւս ձրիավարձ որդեգրաց ձեմարանի:

Ե. Կոշում կանդիդատսն ի հաշիւս ձրիավարձ որդեգրաց յիւեալ երկի կարգաց, յէս հասանելոյ ի Մաս-

կվա, ուրիշ կերպիւ շեն կարող բնդունուիլ ի ձեմարան, երբ ոչ երաշխաւորութեամբ Մոսկվայի մէջ գրասնող անձին, այսինքն՝ ազգականի կամ բարեկամի, որ գրով կը պատրաստուի բնդունել զնա դարձեալ իւր մօտ, երբ պատանի նմա արձակուիլ ի ձեմարանէ վասն օրինաւոր պատճառաց յառաջ քան զաւարտելն զուսման բնրացք:

Զ. Որպէս ի ձրիավարձ աշակերտաց՝ քէ նոքա, որք կարձակուին ի ձեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման բնրացք, եւ քէ նոքա, որք կաւարտեն զուսման բնրացք, ոչ ինչ դրամական օգնութիւն ստանալու շեն վասն վերադառնալոյ ի հայրենիս: Եւ այսու պատճառաւ

Է. Երբ որ կը մտնեն նոքա ի ձեմարան, նոցա ծնողքն կամ ազգականն պատրաստ են միւս վկայականաց հետ ի միասին առաջի առնել նոյնպէս գրաւոր պարաւանդութիւն, որ երբ պատանի իւրեանց որդւոց կամ ազգականաց արձակուիլ ի ձեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման բնրացք կամ յէս այնորիկ՝ վասն որպիսի եւ իցէ պատճառաց, ինքեանք ծնողքն կամ ազգականն՝ ունին իւրեանց վերայ առնուլ զնանապահական ծախք. իսկ՝ որք կցանկան զիւրեանց որդիք կամ ազգականք, զայլ ի շարս աշակերտաց Հոգեւորական Բաժնի, նոքա՝ բաց յայնմանէ, պատրաստ են առաջի առնել գրաւոր պարաւանդութիւն, քէ ինքեանք երբեք անհանգիստ առնելու շեն զձեմարանի Կառավարութիւնը խնդրենքով վասն ազգաց կացուցանելոյ զիւրեանց որդիք կամ ազգականք ի ծառայելոյ Հայոց եկեղեցիներում, հոգեւոր դպրոցներում եւ Առաջնորդական աշխատանքներում:

Ը. Ի շարս ձրիավարձ կազարեան որդեգրաց բնդունում են առաւելապէս շքաւոր Հայ աղնուսականաց որդիքն:

ԱՄՈՒՌ ԳԵՏՆ

ՌՈՒՍԻՈՅ ՌԻ ԶԻՆԱՅ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԹ

Արեւելեան Ասիոյ ամենէն մեծ գետերէն մէկն է Ամուր բոսում գետը, որ Պարփատապահն կամ Զինկհան լեռներէն կը դիսի 48° 50' հիւսիս. լայնութեան ասիլ: Ինչպէս Ասիոյ ուրիշ մէկքանի գետերը՝ եւ սա եւս այլեայլ անուններ ունի. բոլորած տեղը կըսուի Օհոն. իսկ իւր բնթացքին ամենէն աւելի հիւսիսային դիրքն հասած ժամանակը՝ կըոչուի Ամուր, որ եւ իւր սովորական անունն է: Եւ որովհետեւ

չորս կողմը պատող լեռները մթին անտառներով լեցուն են, անոր համար Զինացիք Սաղալիին — ուրիս կանուանեն այս գետը, որ մեր սեւջուր ու Տանկաց զարաւու անուններուն կը պատասխանէ:

Ամուր գետը իւր երկարաձիգ բնթացքին մէջ շատ մը մանր գետակներու ջրերն ալ կընդունի, անով աւելի ալ մեծնալով ու սրանալով, Թուսի Ասիոյ բնդարձակ գաւառներէն